

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2002 թվականի  
սեպտեմբերի 14-ին

ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության, որպես պետական ծառայության հաստուկ տեսակի, կազմակերպման և իրականացման, հարկային ծառայության պաշտոններ անձանց իրավական կարգավիճակի, հարկային ծառայության առանձնահատկությունների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

2.Հարկային ծառայության աշխատողների աշխատանքային իրավունքներին և պարտականություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով, կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

**Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը**

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության մարմնի (այսուհետ՝ հարկային մարմն) և դրանում հարկային ծառայություն իրականացնող պաշտոնատար անձանց վրա:

2. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում հարկային մարմնի քաղաքացիական ծառայողների, վարչատեխնիկական կամ այլ սպասարկման գործառույթների հրականացնող անձանց վրա:

**Հոդված 3. Հարկային ծառայության մասին օրենսդրությունը**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից և այլ իրավական ակտերից:

2. Եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են պայմանագրերի նորմերը:

**Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

հարկային ծառայող՝ հարկային մարմնում հարկային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն (բացառությամբ ժամանակավոր թափուր պաշտոնի)<sup>(\*)</sup> գրադարձնող անձ.

հարկային ծառայության պաշտոնի նկարագիր՝ տվյալ պաշտոնը գրադարձնող հարկային ծառայողի համար օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները նկարագրող և տվյալ պաշտոնը գրադարձնելու համար հարկային ծառայողին մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող, ինչպես նաև հարկային ծառայության համապատասխան կոչում ունենալու պահանջները սահմանող, հարկային մարմնի հաստատած փաստաթուղթը.

հարկային գաղտնիք՝ հարկ վճարողի,<sup>(\*)</sup> հարկ վճարողի գործունեությամբ<sup>(\*)</sup> վերաբերյալ հարկային մարմնի կամ հարկային ծառայողի ստուգած ցանկացած տեղեկություն, բացառությամբ՝

- հարկ վճարողի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների,

- հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկության,

- հարկ վճարողի կանոնադրության մեջ ներառվող տեղեկությունների,

- հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի<sup>(\*)</sup>,<sup>(\*\*)</sup>,<sup>(\*\*\*)</sup> պահանջների խախտման և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկությունների,

- հարկ վճարողի (հարկ վճարողի գործունեության) վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա այլ պետությունների հարկային (մաքսային) մարմիններին ներկայացվող տեղեկությունների:

Հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների օգտագործման, տրամադրման և հրապարակման դեպքերը սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային օրենսդրությամբ.<sup>(\*)</sup>,<sup>(\*\*)</sup>,<sup>(\*\*\*)</sup>

**ռոտացիա՝** հարկային մարմնի ստորաբաժանումների հարկային ծառայողների տեղափոխում հարկային մարմնի մի ստորաբաժանումից մեկ այլ ստորաբաժանում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

**հարկային ծառայողի ատեստավորում՝** հարկային ծառայողի գրադեքտած պաշտոնին վերջինիս համապատասխանությունը և ծառայողական առաջնադաշտական նպատակահարմարությունը որոշելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով անցկացվող որակավորման ստուգում.

**հարկային ծառայության գործառույթներ՝** վերադաս հարկային մարմնի և հարկային տեսչությունների՝ ըստ կառուցվածքային ստորաբաժանումների, հարկային մարմնի ղեկավարի կողմից հաստատվող գործառության պարուականություններ՝<sup>2)</sup>

**հարկային ծառայողի վարքագիր՝** կանոններ՝ հարկային ծառայողի մասնագիտական (ծառայողական) պահվածքի և վարվելակերպի նորմեր պարունակող փաստաթուղթ, որը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը.

**հարկային ծառայողի նյութական պատասխանատվություն՝** սույն օրենքով, հարկային ծառայության ընթացակարգերով և հարկային ծառայողի վարքագիր կանոններով հարկային ծառայողի համար սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի որոշմամբ և հարկային մարմնի ղեկավարի կողմից կիրառվող պատասխանատվության տեսակ.

**ծառայողական քննություններ՝** անցկացնող հանձնաժողով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով առաջարկված թեկնածուներից հարկային մարմնի ղեկավարի կողմից ձևավորվող մարմին, որն իրականացնում է սույն օրենքով և հարկային մարմնի ղեկավարի սահմանած կարգով՝<sup>2)</sup> վերապահված լիազորություններ:

**հարկային վարչարարություն՝** հարկային մարմնի՝ սույն օրենքի և այլ իրավական ակտերի, հիմնա վրա իրականացվող գործողություններ՝ ուղղված հարկային՝<sup>3), 4), 5)</sup> օրենսդրության համատարած և ճիշտ կիրառման ապահովմանը, հարկային մարմնի խնդիրների իրագործմանը.

**հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ՝** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և համայնքների<sup>5)</sup> բյուջեներ՝<sup>3)</sup> վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված պարտադիր այլ վճարների՝<sup>3), 5), 9)</sup> դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջություն, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին.

**հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներ՝** վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներ, հարկային մարմնի հարկային տեսչություններ՝<sup>2)</sup>

**հարկային ծառայության կարդերի ռեգերվ՝** հարկային ծառայության թափուր պաշտոն գրադեմնելու համար անցկացված մրցույթում օրենքով սահմանված կարգով հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի չնշանակված և (կամ) սույն օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված հիմքով հարկային ծառայությունից ազատված անձանց հանրույթ:

#### **Հոդված 5. Հարկային ծառայությունը**

Հարկային ծառայությունը սույն օրենքի 8-րդ հոդվածում նշված մարմնում հարկային ծառայողի կողմից սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ու իր իրավասության սահմաններում իրականացվող մասնագիտական գործունեությունն է, որը նպատակառություն է հարկային մարմնի կողմից վերահսկող եկամուտները, նպաստելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական անվտանգությանը:<sup>2)</sup>

#### **Հոդված 5'. Հարկային մարմինը**

Հարկային մարմինը հարկային՝<sup>3), 4), 5)</sup> օրենսդրության կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող միասնական պետական կառավարման հանրապետական մարմնն է, որը կողչած է իրագործելու սույն օրենքով սահմանված խնդիրները, ապահովելու բյուջեների՝ հարկային մարմնի կողմից վերահսկող եկամուտները, նպաստելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական անվտանգությանը:<sup>2)</sup>

#### **Հոդված 6. Հարկային ծառայության մարմնի խնդիրները**

Հարկային ծառայության մարմնի խնդիրներն են՝

1. հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի՝<sup>3), 4), 5)</sup> պահանջների կատարման և կիրառման նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացնումը.

2. հարկային՝<sup>3), 4), 5)</sup> օրենսդրության պահանջների խախտումների կանխումը, խափանումը, այդ խախտումների բացահայտումը,

**3. հարկային** <sup>\*3), \*5), \*9)</sup> օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների չկատարման հետևանքով լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և համայնքների <sup>\*5)</sup> բյուջեների <sup>\*3)</sup> նկատմամբ առաջացած պարտավորությունների մարման գծով աշխատանքների իրականացումը.

**4. հարկային** <sup>\*5), \*9)</sup> **հարցերին**<sup>\*3)</sup> առնչվող միջազգային պայմանագրերով լեռնային Ղարաբաղի Հանրապետության պարտավորությունների կատարումը և իրավունքների իրականացումը, օտարերկրյա պետությունների հարկային և իրավասու այլ մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը.

5. օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացումը.

6. ֆիզիկական անձանց եկամուտների, գույքի և ժամանակակից հայտարարագրման մասին օրենսդրության պահանջների կատարման և կիրառման նկատմամբ հսկողության իրականացումը.

7. հարկային հարաբերությունները <sup>\*3), \*5), \*9)</sup> կարգավորող օրենսդրական ակտերի կիրառման վերաբերյալ հարկային ժառայողների և հարկ վճարողների ուսուցման կազմակերպումը: <sup>\*2)</sup>

## Գլուխ II. Հարկային ծառայության կազմակերպումը

### Հոդված 7. Հարկային ծառայության կազմակերպման սկզբունքները

Հարկային ծառայության կազմակերպման սկզբունքներն են՝

1. լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների գերակայությունը, մարդու իրավունքների և ազատությունների առաջնայնությունը.

2. հարկային ծառայության կայունությունը.

3. հարկային ծառայողներին ներկայացվող պահանջների միասնականությունը և հարկային ծառայողների իրավահավասարությունը.

4. օրենքով նախատեսված դեպքերում հարկային ծառայության իրապարակայնությունը.

5. քաղաքացիների համար հարկային ծառայության իավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան.

6. հարկային ծառայողների արհեստավարժությունը.

7. հարկային ծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը.

8. հարկային ծառայողների պատասխանատվությունը՝ իրենց ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

9. հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարների (այսուհետ՝ հարկեր) վճարման կամավորությունը և անխուսափելիությունը.

10. հարկային օրենսդրության միատեսակ կիրառումը.

11. հարկային ծառայության արյունավետ կազմակերպումը.

12. հարկային ծառայողների ռոտացիան:

### Հոդված 8. Հարկային մարմինները <sup>\*6)</sup>

1. Հարկային մարմիններն են՝

1) վերադաս հարկային մարմինը.

2) հարկային տեսչությունները: <sup>\*6)</sup>

2. (ուժը կողցրած է ճանաչվել)

3. Հարկային մարմնի հարկային տեսչություններն ստեղծում, վերակազմակերպում և լուծարում է լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

4. Հարկային մարմնի համակարգը ներառում է <sup>\*6)</sup> առանձնացված ստորարաժանումներ, որոնք <sup>\*6)</sup> ստեղծում է լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

5. Վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորարաժանումների և հարկային տեսչությունների կառուցվածքը և գործառույթները հաստատում է Հարկային մարմնի դեկավարը:

6. <sup>2)</sup> (ուժը կողցրած է ճանաչվել) <sup>\*6)</sup>

### Հոդված 9. Հարկային մարմնի գործառույթները

1. Հարկային մարմնի գործառույթներն են՝

1/ հարկ վճարողների սպասարկում (հարկ վճարողներին իրազեկում, հարկային հաշվարկների, հայտարարագրերի, հաշվետվությունների, տեղեկանքների և օրենքով սահմանված այլ փաստաթղթերի ընդունում, օրենքով նախատեսված դեպքերում հարկերի հաշվարկում).

2/ հարկ վճարողների հաշվարում.

3/ հարկերի և պարտադիր այլ վճարների հավաքման կազմակերպումը.

4/ հարկ վճարողների նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացումը.

5/ հարկային <sup>\*6), \*9)</sup> օրենսդրության, հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի՝ հարկային <sup>\*5), \*9)</sup> պարտավորությունների (այսուհետ՝ սույն օրենքի իմաստով հարկային

պարտավորություն) գծով պահանջների պատճենական պատասխանատվության կիրառումը.<sup>\*3)</sup>

խախտման համար օրենքով

սահմանված

6/ հարկ վճարողների բողոքների բնարկումը և որոշումների կայացումը.

7/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և համայնքների<sup>\*5)</sup> բյուջեների<sup>\*3)</sup> հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների հաշվառումը.

7') արժութային հարաբերությունները կարգավորող օրենսդրության պահանջների նկատմամբ հսկողության իրականացումը.<sup>\*4)</sup>

8/ հարկային օրենսդրությամբ և հարկային հարաբերությունները կարագավորող մյուս իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

9) գործատուների կողմից վարձու աշխատողների պայահովագրական նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման ճշտության նկատմամբ հսկողությունը՝ օրենքով սահմանված դեպքերում:<sup>\*4)</sup>

2. Հարկային մարմնը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համաձայն իրականացնում է հետաքննություն և (կամ) նախաքննություն<sup>\*6)</sup>:

3.(ուժը կողցրած է ճանաչվել):<sup>\*2)</sup>

#### Հոդված 10. Հարկային մարմնի պարտականությունները

1. Հարկային մարմնը պարտավոր է՝

1/ պահպանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությունը, հարկ վճարողների իրավունքներն ու օրինական շահերը.

2/ իրականացնել հսկողություն՝ հարկային օրենսդրության, պետական տուրքի և պարտադիր այլ վճարների վերաբերյալ օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ.

3/ հանցագործության հատկանիշներով հարկային օրենսդրության խախտման դեպքեր հայտնաբերելու դեպքում օրենքով սահմանված կարգով անցկացնել հետաքննություն և (կամ) նախաքննություն<sup>\*6)</sup>.

4/ իրականացնել հարկ վճարողների հաշվառումը.

5/ հարկային օրենսդրության և դրան համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ իրականացնել բացատրական աշխատանքներ, տեղեկացնել հարկ վճարողներին գործող հարկերի և պարտադիր այլ վճարների մասին.

6/ իրականացնել օրենսդրությամբ սահմանված չափից ավելի վճարված (բռնագանձված) հարկերի և պարտադիր այլ վճարների հաշվանցումը (կամ վերադարձման համար օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ տեղեկությունների, տեղեկանքների տրամադրումը).

7/ պահպանել հարկային գաղտնիքը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում տրամադրել այդ տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու իրավասություն ունեցող պետական մարմիններին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

8/ սահմանված ժամկետներում քննարկել հարկ վճարողի ներկայացրած բողոքը հարկային մարմնի (ստորաբաժնանան) կամ հարկային ծառայողի գործողությունների (անգործության) դեմ և ընդունված դրոշման մասին տեղյակ պահել հարկ վճարողին.

9/ իրականացնել ծառայողական քննություն՝ հարկային ծառայողների կատարած խախտումների վերաբերյալ:

2. Հարկային մարմնը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով կրում է նաև այլ պարտականություններ:

#### Հոդված 11. Հարկային մարմնի իրավունքները

1. Հարկային մարմինն իրավունք ունի՝

1/ հարկ վճարողներից, հարկային գործակալներից և հարկային հարաբերություններին առնչվող այլ անձանցից պահանջել փաստաթղթեր, տվյալներ, բացատրություններ, տեղեկանքներ հարկերի և պարտադիր այլ վճարների հաշվարկման և վճարման համար հիմք համարվող օրենքի հիման վրա սահմանված հաշվետվություններ, եկամուտներ, գույք և ծախսեր հայտարարագրող<sup>\*2)</sup> անձանց մոտ.

2/ հարկերի և պարտադիր այլ վճարների հաշվարկման, վճարման նկատմամբ օրենքով սահմանված կարգով անցկացնել ստուգումներ՝ նախարարությունների, պետական կառավարման և տեղական ինքնակարավարման մարմինների, հիմնարկների աշխատակազմներում, կազմակերպությունների և անհատ ծեռնարկատերների, ինչպես նաև ապօրինի ծեռնարկատիրական գործունեություն իրականացնող, եկամուտներ, գույք և ծախսեր հայտարարագրող<sup>\*2)</sup> անձանց մոտ.

3/ օրենսդրությամբ սահմանված կարգով վերցնել փաստաթղթեր, իրեր, փորձանմուշներ, որոնք անմիջականորեն աշնչվում են ստուգման նպատակներին.

4/ ստուգման կամ ստուգումների բնագավառը կարգավորող օրենսդրությամբ իրականացվող ուսումնասիրությունների ընթացքում ստուգվող սուբյեկտի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք

գործել ստուգվող սուբյեկտի գրասենյակային, առևտրային, արտադրական, պահեստային, արխիվային, դրամարկղային տարածքներ և ստուգվող այլ ստորաբաժանումներ, ստուգումների բնագավառը կարգավորող օրենսդրությամբ սահմանված կարգով կապարակներ, կնքել այդ տարածքները, այցելել հարկային մարմիններում օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված հարկային հաշվառման գրքերի գրանցման հասցեները.

5/ օրենքով սահմանված դեպքերում ինքնուրույն հաշվարկել, վերահաշվարկել, ճշգրտել հարկ վճարողի, հարկային գործակալի, հարկային պարտավորություն ունեցող այլ անձի հարկերի և պարտադիր այլ վճարների գծով պարտավորությունները՝ երրորդ անձանցից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և օրենքով չարգելված այլ աղբուրներից ստացված տեղեկության հիմնա վրա, կատարել չափագրումներ, գույքագրումներ, հսկիչ գնումներ՝ ստուգումների բնագավառը կարգավորող օրենսդրությամբ սահմանված կարգով.<sup>\*)</sup>

6/ հարկային պարտավորությունները ճշտելու և հարկերի վճարման հետ կապված այլ խնդիրներ քննարկելու նպատակով գրավոր ծանուցմամբ առաջարկել հարկ վճարողներին (հարկ վճարողների ներկայացուցիչներին), հարկային գործակալներին և այլ անձանց ներկայանալ հարկային մարմին.

7/ հարկային հսկողության ընթացքում ներգրավել մասնագետներ, փորձագետներ և թարգմանիչներ.

8/ պահանջել հայտնաբերված հարկային օրենսդրության խախտումների վերացում և վերահսկել առաջադրված պահանջի կատարումը.

9/ օրենքով սահմանված կարգով պահել, կրել, օգտագործել գենք և զինամթերք.

10/ օրենքով նախատեսված կարգով իրականացնել օպերատիվ հետախուզական միջոցառումներ՝ նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հարկային իրավախսախուզումների վերաբերյալ առկա տեղեկությունների, ինչպես նաև հարկային հանցագործության կատարման մասին վկայող այլ փաստերի ու հանգամանքների առկայության դեպքում.

11/ օպերատիվ անհրաժեշտությունից ելնելով՝ օգտագործել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների փոխադրական և կապի միջոցները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցելով ծախսերը.

12/ ֆիզիկական և իրավաբանական անձանց տրված լիցենզիաներն ուժը կորցրած ծանաչելու կամ դրանց գործողությունը կատեցնելու միջնորդագրեր ներկայացնելու լիազորված մարմիններ.

Սույն կետի առաջին մասով սահմանված միջնորդագրերը կարող են ներկայացվել նաև այն դեպքերում, եթե տնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական կամ այլ անձինք հաշվառման չեն կանգնել հարկային մարմնում կամ հարկային մարմին չեն մերկայացրել լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված հաշվարկներ, հայտարարագրեր, հաշվետվություններ կամ հաշվապահական փաստաթթեր՝ առանց որոնց հարկային մարմնի պաշտոնատար անձինք չեն կարող որոշել հարկման բազան, կամ հնարավոր չեն հարկերի գանձումը, կամ հարկային մարմնի պաշտոնատար անձանց թույլ չեն տալիս մուտք գործել հարկ վճարողների տարածքներ, եթե նշված պաշտոնատար անձինք ունեն այդպիսի իրավասություն.<sup>\*)</sup>

13) հայց ներկայացնել դատարան, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող, տալ դատարանում գործը վարելու համար լիազորագրեր:<sup>4)</sup>

14/ դատարան ներկայացվելիք հայցերի ապահովման նախատեսվող հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում արգելանք դնել գույքի վրա, վերջինիս վրա բռնագանձում տարածելու մասին դատարանի վճռից հետո մասնակցել գույքի իրացնանը և հսկել ստացված միջոցների մուտքագրումը պետական բյուջե.

15/ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի կիրառման վերաբերյալ պաշտոնական պարզաբանումներ տրամադրել:<sup>2)</sup>

2. Հարկային մարմինն օգտվում է նաև օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

3. Հարկային մարմինը լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների սահմաններում ընդունում է գերատեսչական նորմատիվ ակտեր, որոնց կատարումը պարտադիր է պետական մարմինների, համայնքների, հիմնարկների, կազմակերպությունների, քաղաքացիների, ինչպես նաև լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն իրականացնող կամ եկամուտ ստացող (վճարող) այլ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների համար:

### Հոդված 11<sup>1</sup>. Հարկային մարմնի (վերադաս հարկային մարմնի)<sup>\*)</sup> դեկավարը

Հարկային մարմնի դեկավարն իրականացնում է սույն օրենքով սահմանված գործառույթներ, կրում է սույն օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված պարտականություններ և իրավունքներ, այդ թվում՝

1) օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունում է նորմատիվ ակտեր, որոնց կատարումը պարտադիր է պետական մարմինների, համայնքների, հիմնարկների, կազմակերպությունների, քաղաքացիների, ինչպես նաև լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տնտեսական

(ձեռնարկատիրական) գործունեություն իրականացնող կամ եկամուտ ստացող (վճարող) այլ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների համար.

2) ստալիս է ստուգումների բնագավառը կարգավորող օրենսդրությամբ նախատեսված հանձնարարագրեր, հրամաններ.

3) հարկային ծառայողներին և հարկային մարմնի համակարգի քաղաքացիական ծառայողներին ու այլ աշխատակիցներին տալիս է բնագավոր և գրավոր հանձնարարություններ.

4) սահմանում է հարկային մարմնի ղեկավարի տեղակալների, վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների պետերի, հարկային տեսչությունների պետերի հրավասությունների շրջանակները, գործունեության բնագավառները և պատասխանատվությունը՝ սույն օրենքից ենելով.

5) սահմանում է վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների և հարկային տեսչությունների գործառույթները, հարկային տեսչությունների գործունեության բնագավառները.

6) հաստատում է վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների և<sup>4)</sup> հարկային տեսչությունների կառուցվածքը և հաստիքացուցակը<sup>8)</sup>.

7) Եթոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հաստատման է ներկայացնում հարկային մարմնի տարեկան աշխատանքային ծրագիրը.

8) հաստատում է հարկային մարմնի տարեկան հավելեցիրը տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, ֆինանսական հաշվետվությունները.

9) վերահսկողություն է իրականացնում հարկային մարմնի ամրացված պետական սեփականության պահպանման և արդյունավետ օգտագործման նկատմամբ.

10) կասեցնում կամ ուժը կորցրած է ձանաչում հարկային մարմնի համակարգում ընդունված՝ Եթոնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը չհամապատասխանող հրավական ակտերը.

11) չեղալ է ձանաչում հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի՝ Եթոնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը չհամապատասխանող որոշումները.

12) տնօրինում է հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդի միջոցները.

13) ստեղծում է աշխատանքային և փորձագիտական հանձնաժողովներ և խմբեր՝ ըստ անհրաժեշտության.

14) պատասխանատվություն է կրում հարկային վարչարարության՝ սույն օրենքով սահմանված կարգով կազմակերպման և իրականացման համար.

15) հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի եզրակացության իիման վրա կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

-Եզրակացությունը թողնել ամենատարածված,

-Եզրակացությունը վերադարձնել լրացրից քննության,

-Վերանայել պատասխանատվության ծկզբանը,

-Արձակել հրաման՝ հարկային ծառայողին կարգապահական կամ նյութական պատասխանատվության ենթարկելու համար<sup>\*)</sup>

## Հոդված 11<sup>թ</sup>. Հարկային մարմնի հրավունքների հրականացումը

Սույն օրենքի՝

-9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորությունն իրականացնում են Եթոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հաստատած վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումները,

-11-րդ հոդվածի առաջին մասի՝

1) 1-5-րդ կետերով սահմանված հարկային մարմնի հրավունքներն իրականացնում է ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնող հարկային ծառայողը.

2) 6-7-րդ կետերով սահմանված հարկային մարմնի իրավունքներն իրականացնում են հարկային տեսչության պետը, վերադաս հարկային մարմնի համապատասխան լիազորություններ ունեցող ստորաբաժանման պետը, հարկային մարմնի ղեկավարի տեղակալը, հարկային մարմնի ղեկավարը.

3) 8-րդ կետով սահմանված հարկային մարմնի իրավունքներն իրականացնում են ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնող հարկային ծառայողը, հարկային տեսչության պետը, վերադաս հարկային մարմնի համապատասխան լիազորություններ ունեցող ստորաբաժանման պետը.

4) 9-րդ կետով սահմանված հարկային մարմնի իրավունքներն իրականացնում են հարկային մարմնի օպերատիվ ստորաբաժանման հարկային ծառայողը, հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը.

5) 10-րդ կետով սահմանված հարկային մարմնի իրավունքներն իրականացնում է հարկային մարմնի օպերատիվ ստորաբաժանման հարկային ծառայողը.

6) 11-րդ կետով սահմանված հարկային մարմնի իրավունքներն իրականացնում են հարկային մարմնի օպերատիվ ստորաբաժանման հարկային ծառայողը, ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնող հարկային ծառայողը՝ ստուգման ընթացքում.

7) 12-րդ կետով սահմանված հարկային մարմնի իրավունքն իրականացնում է հարկային մարմնի ղեկավարը.

8) 13-րդ կետով սահմանված հարկային մարմնի իրավունքներն իրականացնում են հարկային մարմնի ղեկավարը, հարկային մարմնի ղեկավարի լիազորած հարկային ժառայողը.

9) 14-րդ կետով սահմանված հարկային մարմնի իրավունքներն իրականացնում են հարկային տեսչության պետը, վերադաս հարկային մարմնի համապատասխան լիազորություններ ունեցող ստորաբաժանման պետը, հարկային մարմնի ղեկավարի տեղակալը, հարկային մարմնի ղեկավարը.

10) 15-րդ կետով սահմանված հարկային մարմնի իրավունքն իրականացնում է հարկային մարմնի ղեկավարը.

Հարկային տեսչության պետի, վերադաս հարկային մարմնի համապատասխան լիազորություններ ունեցող ստորաբաժանման պետի, հարկային մարմնի ղեկավարի իրավունքներն անհրաժեշտության դեպքում իրականացնում են նաև օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց փոխարինող պաշտոնատար անձինք:<sup>2)</sup>

### Գլուխ III Հարկային ժառայության սահմանափակումները, պաշտոնները, կոչումները

#### Հոդված 12. Հարկային ժառայության պաշտոնի նշանակվելու իրավունք ունեցող անձինք

Սույն օրենքով սահմանված կարգով հարկային մարմնում հարկային ժառայության պաշտոնի նշանակվելու իրավունք ունի հայերենին տիրապետող, պետական հավատարմագրում ստացած բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտած՝ պետական հավատարմագրում ստացած մասնագիտությունների գծով<sup>4)</sup> բարձրագույն կրթություն ունեցող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացին:

Հարկային ժառայության պաշտոնի նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

#### Հոդված 13.Հարկային ժառայողի նկատմամբ կիրավող սահմանափակումները

1. Հարկային ժառայության պաշտոնի չի կարող նշանակվել այն անձը, ով՝

1/ դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2/ դատական կարգով զրկված է հարկային ժառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որոշակի պաշտոններ գրադեցնելու իրավունքից.

3/ տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հարկային ժառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ժառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների հրականացմանը.

4/ դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5/ խուսափել է ժամկետային գինվորական ժառայությունից:<sup>2)</sup>

2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիվանդությունների ցանկը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

3. Հարկային ժառայողն իրավունք չունի՝

1/ լինել քաղաքական կուսակցության անդամ, գրադեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.

2/ գրադեցնել ծերնարկատիրական գործունեությամբ.

3/ լինել երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ժառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.

4/ հոնարար ստանալ ժառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.

5/ ոչ ժառայողական նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ժառայողական տեղեկատվությունը.

6/ ժառայողական պարտականությունները կատարելու համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումար կամ ժառայություններ, բացառությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

7/ որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել սույն հոդվածի 5-րդ մասում նշված անձանց հետ, բացառությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

8/ հարկային ժառայության պաշտոնից ազատվելուց հետո երեք տարվա ընթացքում ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում:

4. Հարկային ծառայության նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հարկային ծառայողը լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում 10 և ավելի տոկոս բաժնեմաս ունենալու դեպքում լիազորագրի հիման վրա դա հանձնել այլ անձի<sup>2)</sup>:

5. Հարկային ծառայողին արգելվում է համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, նրանց զավակ, ամուսնու ծնող, եղբայր և քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միջյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:

#### **Հոդված 14. Հարկային ծառայության պաշտոնների դասակարգումը**

1. Հարկային ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելեկով այդ պաշտոններն զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և դեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման պահանջի, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների անհրաժեշտ մակարդակից:

2. Հարկային ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի՝

1/ հարկային ծառայության բարձրագույն պաշտոններ.

2/ հարկային ծառայության գլխավոր պաշտոններ.

3/ հարկային ծառայության առաջատար պաշտոններ.

4/ հարկային ծառայության կրտսեր պաշտոններ:

#### **Հոդված 15. Հարկային ծառայության պաշտոնների անվանացանկը**

1. Հարկային մարմնի համակարգում սահմանվում են հարկային ծառայության հետևյալ պաշտոնները.

Այսումբ. հարկային ծառայության բարձրագույն պաշտոններ՝

հարկային մարմնի ղեկավար, հարկային մարմնի ղեկավարի տեղակայ, հարկային մարմնի վարչության<sup>4)</sup> պետ, հարկային տեսչության<sup>5)</sup> պետ.

Բյուլմբ. հարկային ծառայության գլխավոր պաշտոններ՝

հարկային մարմնի վարչության պետի տեղակալ, վերադաս հարկային մարմնի բաժնի պետ, հարկային տեսչության<sup>6)</sup> պետի տեղակալ.

Գյուլմբ. հարկային ծառայության առաջատար պաշտոններ՝

վերադաս հարկային մարմնի գլխավոր օպերիհազոր, վերադաս հարկային մարմնի գլխավոր հարկային տեսուչ, վերադաս հարկային մարմնի գլխավոր մասնագետ, վերադաս հարկային մարմնի խմբի ղեկավար, վերադաս հարկային մարմնի ղեկավար մասնագետ-հրավարան, վերադաս հարկային մարմնի ավագ քննիչ,<sup>7)</sup> վերադաս հարկային մարմնի ավագ հետաքննիչ, հարկային տեսչության բաժնի պետ, վերադաս հարկային մարմնի ավագ օպերիհազոր, վերադաս հարկային մարմնի ավագ հարկային տեսուչ, վերադաս հարկային մարմնի առաջատար մասնագետ, վերադաս հարկային մարմնի առաջատար մասնագետ-հրավարան, վերադաս հարկային մարմնի քննիչ,<sup>8)</sup> վերադաս հարկային մարմնի հետաքննիչ, հարկային տեսչության<sup>9)</sup> գլխավոր հարկային տեսուչ, հարկային տեսչության<sup>10)</sup> գլխավոր մասնագետ, վերադաս հարկային մարմնի հարկային տեսուչ.

Դյուլմբ. հարկային ծառայության կրտսեր պաշտոններ՝

հարկային տեսչության<sup>11)</sup> ավագ հարկային տեսուչ, հարկային տեսչության<sup>12)</sup> առաջատար մասնագետ, վերադաս հարկային մարմնի 1-ին կարգի մասնագետ, վերադաս հարկային մարմնի 2-րդ կարգի մասնագետ, հարկային տեսչության<sup>13)</sup> հարկային տեսուչ, հարկային տեսչության 1-ին կարգի մասնագետ, հարկային տեսչության<sup>14)</sup> 2-րդ կարգի մասնագետ:

2. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից ստեղծվող հարկային մարմնի այլ առանձնացված ստորաբաժանումների հարկային ծառայողների պաշտոնների անվանացանկը հաստատվում է առանձնացված ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ:

3. Հարկային մարմնի ղեկավարի և հարկային մարմնի ղեկավարի տեղակալի, վերադաս հարկային մարմնի վարչության պետի, հարկային տեսչության պետի<sup>15)</sup> պաշտոններ անձանց վրա չեն տարածվում սույն օրենքով սահմանված մրցույթի, ատեստավորման և վերապատրաստման հետ կապված նորմերը:<sup>16), 17)</sup>

#### **Հոդված 16. Հարկային ծառայության ստաժը**

1. Հարկային ծառայության ստաժը ներառում է հարկային ծառայողի՝ հարկային ծառայության պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հարկային մարմնում աշխատած ողջ ժամանակաշրջանը:

2. Հարկային ծառայության ստաժը հաշվարկվում է հարկային ծառայողի ընդհանուր և մասնագիտական աշխատանքային ստաժում:

3. Մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով սահմանված կարգով հարկային ծառայողի գործուղման դեպքում պահպանվում է վերջինիս պաշտոնը, դրանական բավարարումը և հարկային ծառայության ստաժը:

4. Հարկային ծառայողների համար կենսաթոշակային տարիքը հաշվարկվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:<sup>(2)</sup>

#### Հոդված 17. Հարկային ծառայության մրցության և ատեսավորման հանձնաժողովը

1. Սույն օրենքով սահմանված կարգով մրցույթներ և ատեսավորումներ անցկացնելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշմանք ստեղծվում է հարկային ծառայության մրցության և ատեսավորման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որի կազմում բացի Հանձնաժողովի նախագահից ընդգրկվում է 4 անդամ:<sup>(2)</sup> առաջադրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած չափանիշներով:

Հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է հարկային մարմնի ղեկավարը, իսկ աշխատակարգը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:<sup>(4)</sup>

2. Հանձնաժողովի որոշումներն իրավագոր են, եթե այդ որոշումների կայացմանը մասնակցել է առնվազն 4:<sup>(2)</sup> հոգի:

3. Հանձնաժողովի նախագահը և անդամներն իրենց աշխատանքը հանձնաժողովում համատեղում են իրենց գրադեցրած պաշտոնների հետ: Հանձնաժողովի նախագահը պետք է ունենա հարկային ծառայության առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ, իսկ անդամները՝ հարկային ծառայության կամ ֆինանսահարկային բնագավառի գիտական աշխատանքի առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ:<sup>(2)</sup>

#### Հոդված 18. Հարկային ծառայության պաշտոն գրադեցնելու համար անցկացվող մրցույթը

1. Սույն օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ պարբերությամբ սահմանված կարգով, այդ թվում՝ հարկային ծառայության կադրերի ռեգերսից, ինչպես նաև հարկային մարմիններում քաղաքացիական պաշտոն գրադեցնող անձանցից<sup>(6)</sup> հարկային ծառայության պաշտոնների անվանացանկի Դ խմբին դասվող թափուր պաշտոնում նշանակում չկատարելու դեպքում Հանձնաժողովը կազմակերպում է բաց մրցույթ: Բաց մրցույթին կարող են մասնակցել հարկային ծառայողները և սույն օրենքի 12-13-րդ հոդվածների պահանջները բավարարող քաղաքացիները:

2. Հարկային ծառայության թափուր պաշտոններ գրադեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հարկային մարմինը իրապարակում է մրցույթը անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ առնվազն հինգ հարյուր տպաքանակ ունեցող մամուլի կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով:

3. Մրցույթը անցկացվում է նաև մրցույթին մեկ մասնակցի դիմելու դեպքում:

Հանձնաժողովը հարկային ծառայողին (քաղաքացուն) չի թույլատրում մասնակցել մրցույթին, եթե քաղաքացին չի բավարարում սույն օրենքի 12-13-րդ հոդվածներով սահմանված պահանջները, կամ ապագա աշխատանքը կապված է մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, նրանց զավակ, ամուսնու ծնող, եղբայր և քույր) հարկային ծառայողի նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:

4. Մրցույթը բաղկացած է երկու մասից՝ թեստավորում և հարցազրույց:

Թեստերը կազմվում են հանձնաժողովի սահմանած կարգով համակարգչում գետեղված հարցաշարից և դրանից պատահական ընտրված հարցերից՝ մասնակիցների գիտելիքները հետևյալ բնագավառներում ստուգելու համար.

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրություն.

1<sup>1</sup>) հարկային ծառայության մասին օրենսդրություն.<sup>(6)</sup>

2/ հարկային օրենսդրության ընդհանուր հարցեր.

3/ հարկային ծառայության մարմնի (կառուցվածքային ստորաբաժանման) իրավասություններին առնչվող իրավական ակտերի իմացություն.

4/ հարկային ծառայության համապատասխան պաշտոնի նկարագրով նախատեսված պահանջների իմացություն:

Թեստերի հարցաշարը, ոչ ուշ, քան մրցույթ անցկացնելուց մեկ ամիս առաջ պետք է իրապարակվի:

Թեստավորման առաջադրաները բարկացած են հարցերից և խնդիրներից: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա երեք կամ չորս ենթադրյալ պատասխան: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա մեկ պատասխան:

Թեստավորումն անցկացվում է մասնակիցների համար կողերի կիրառմամբ՝ գաղտնիությունն ապահովելու նպատակով:

Մրցույթի երկրորդ՝ հարցագրույցի մասին մասնակցելու իրավունք են ձեռք բերում թեստավորման առաջարանքների առնվազն **80 տոկոսին**<sup>(2)</sup> ճիշտ պատասխանած մասնակիցները:

Մասնակիցների հետ հարցագրույցն անցկացվում է հարկային ծառայության տվյալ պաշտոնի նկարագրով նախատեսված լիազորությունների վերաբերյալ նրանց գործնական կարողությունները և անհատական հատկանիշները գնահատելու նպատակով:

Հանձնաժողովը հարցագրույցի արդյունքում յուրաքանչյուր մասնակցի համար անցկացնում է փակ գաղտնի քվեարկություն: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է կողմ կամ դեմ:

Մրցույթում հաղթող են ձանաչվում այն մասնակիցները, ովքեր փակ գաղտնի քվեարկության արդյունքում հավաքել են Հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ծայներ, ապա մրցույթի արդյունքում հաղթող չի ձանաչվում, և անցկացվում է կրկնակի մրցույթ:

Մրցույթի պայմանները չբավարարած անձանց յոթնօրյա ժամկետում այդ մասին հայտնվում է գրավոր:

5. Եթե մրցույթի արդյունքում մասնակիցներից ոչ մեկը թեստավորման առաջադրանքների առնվազն **80 տոկոսին**<sup>(2)</sup> ճիշտ պատասխան չի տվել կամ հարցագրույցի մասնակիցներից ոչ մեկը փակ գաղտնի քվեարկության արդյունքում չի հավաքել Հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ծայներ, ապա մրցույթի արդյունքում հաղթող չի ձանաչվում, և անցկացվում է կրկնակի մրցույթ:

Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն օրենքով սահմանված սահմանափակումներից որևէ մեկը, ապա մրցույթը համարվում է չկայացած և անցկացվում է կրկնակի մրցույթ:

Սույն հոդվածով սահմանված կարգի խախտմամբ անցակցված մրցույթն անվավեր է ձանաչվում դատական կարգով:

Կրկնակի մրցույթ է անցկացվում նաև մրցույթն անվավեր ձանաչելու դեպքում:

Կրկնակի մրցույթն անցակցվում է սույն հոդվածով սահմանված ընդհանուր կարգով:

Եթե կրկնակի մրցույթը համարվում է չկայացած (անվավեր), կամ կրկնակի մրցույթի արդյունքում հաղթող չի ձանաչվում, ապա հարկային ծառայության տվյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար նոր մրցույթը հայտարարվում է կրկնակի մրցույթ անցկացնելուց մեկ ամիս հետո<sup>(2)</sup>:

6. Սույն օրենքի հիման վրա մրցույթ անցկացնելու (մրցույթին մասնակցելու) կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

#### Հոդված 19. Հարկային ծառայության պաշտոնի նշանակումը

1. Հարկային ծառայության պաշտոնների անվանացանկի<sup>(6)</sup> Բ և Գ խմբերում թափուր պաշտոն առաջանալու դեպքում<sup>(6)</sup> հարկային մարմնի դեկավարը կարող է տվյալ կամ դրան հաջորդող խմբին դասվող հարկային ծառայության պաշտոն զբաղեցնող հարկային ծառայողներից կամ հարկային մարմիններում քաղաքացիական, ինչպես նաև հայեցղողական պաշտոն զբաղեցնող անձանցից, հարկային ծառայության կադրերի ռեգերվից<sup>(6)</sup> կատարել նշանակում առաջնայնությունը տալով այն ծառայողներին, որոնց վերաբերյալ Հանձնաժողովը վերջին ատեստավորման արդյունքում կայացրել է սույն օրենքի 20-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետով նախատեսված եզրակացությունը, ինչպես նաև հարկային ծառայության ավելի երկար ստաժ ունեցող ծառայողներին:<sup>(3)</sup>

Սույն մասի առաջին պարբերությամբ նախատեսված դրույթները չեն տարածվում հարկային ծառայության պաշտոնների անվանացանկի Դ խմբին դասվող, սույն օրենքին համապատասխան, տվյալ պաշտոնում նշանակումից հետո 1 տարին ըլրացած հարկային ծառայողների վրա:<sup>(4)</sup>

2. <sup>(4)</sup>Հարկային ծառայության պաշտոնների անվանացանկի<sup>(6)</sup> Բ և Գ խմբերին դասվող թափուր պաշտոնում նշանակում չկատարվելու դեպքում Հանձնաժողովը կազմակերպում է փակ մրցույթ սույն օրենքի 18-րդ հոդվածի 3-6-րդ մասերով սահմանված կարգով:

Փակ մրցույթին կարող են մասնակցել հարկային ծառայողները, ինչպես նաև ֆինանսական, բանկային, մաքսային մարմիններում, ֆինանսավարկային կազմակերպություններում, պետական կառավարման (տեղական ինքնակառավարման) մարմիններում<sup>(6)</sup>, գիտական, բարձրագույն ուսումնական հաստատություններում մասնագիտական աշխատանքի վորոճ ունեցող և սույն օրենքի 12-13-րդ հոդվածների պայմանները բավարարող քաղաքացիները, ընդ որում, հարկային ծառայության պաշտոնների անվանացանկի Բ խմբի<sup>(6)</sup> թափուր պաշտոնների համար կազմակերպուղ փակ մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է 5 տարվա մասնագիտական աշխատանքի վորոճ, իսկ հարկային ծառայության պաշտոնների անվանացանկի Գ խմբի թափուր պաշտոնների համար կազմակերպուղ փակ մրցույթին մասնակցելու համար՝ 3 տարվա մասնագիտական աշխատանքի վորոճ:<sup>(2)</sup>

3. Սույն օրենքով նախատեսված մրցույթի ավարտից հետո եռօրյա ժամկետում Հանձնաժողովը մրցույթի արդյունքում հաղթող ձանաչված մասնակիցների վերաբերյալ հարկային մարմնի դեկավարին մրցույթի արդյունքում հաղթող ձանաչված մասնակիցներից նշանակում է համապատասխան պաշտոնում՝ առաջնայնությունը տալով այն հարկային ծառայողներին (քաղաքացիներին), որոնց

Վերաբերյալ Հանձնաժողովը վերջին ատեստավորման արդյունքում կայացրել է սույն օրենքի 20-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետով՝ նախատեսված եզրակացությունը, ինչպես նաև հարկային ծառայության (մասնագիտական աշխատանքի) ավելի երկար ստաժ ունեցող ծառայողներին (քաղաքացիներին): Մրցույթով անցած անձը հարկային ծառայության պաշտոնում նշանակվում է անժամկետ, բացառությամբ մրցույթով առաջին անգամ հարկային ծառայության պաշտոնի նշանակվող անձի, որը նշանակվում է մինչև վեց ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի անցկացման կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը: Փորձաշրջանի անբավարար արդյունքի դեպքում փորձաշրջանն անցնող անձին այդ մասին հայտնվում է գրավոր՝ փորձաշրջանի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:<sup>2)</sup>

3<sup>1</sup>. Հարկային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ հղիության և ծննդաբերության արծակուրդի, պարտադիր գինվորական ծառայության գորակոչվելու, մինչև հարկային ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից գրադեցնելը, հարկային ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում այդ պաշտոնը կարող է գրադեցվել հարկային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ տվյալ պաշտոնի նկարագրին բավարարող անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կմքելով, իսկ որա անհնարինության դեպքում՝ հաշվի արնելով սույն օրենքի 12-րդ, 13-րդ հոդվածների և 16-րդ հոդվածի չորրորդ մասի պահանջները՝ մեկ այլ անձի հետ կմքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:<sup>4)</sup>

4. Հարկային մարմնի դեկավարին նշանակում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ: Հարկային մարմնի դեկավարի տեղակալին նշանակում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետը՝ հարկային մարմնի դեկավարի ներկայացմամբ: Կերադաս հարկային մարմնի վարչության պետին և հարկային տեսչության պետին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է հարկային մարմնի դեկավարը:<sup>6)</sup>

5. Հարկային ծառայության պաշտոնում նշանակվելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

#### Հոդված 19<sup>1</sup>. Հարկային ծառայության կադրերի ռեզերվը

1. Հարկային ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է:
2. Հարկային ծառայության կադրերի ռեզերվում քաղաքացիները գտնվում են մինչև՝
  - սույն օրենքի 16-րդ հոդվածի չորրորդ մասում նշված ժամկետի լրանալը,
  - սույն օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ պարբերությամբ սահմանված կարգով հարկային ծառայության թափուր պաշտոնին նշանակումը,
  - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիության դադարումը,
  - սույն օրենքի 13-րդ հոդվածի պահանջների խախտման հիմքերի առաջացումը,
  - հարկային ծառայության կադրերի ռեզերվից դուրս գալու մասին քաղաքացու դիմումի ներկայացումը:

#### Հոդված 20. Հարկային ծառայողների ատեստավորումը

1. Յուրաքանչյուր տարի հարկային ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր ատեստավորման:
2. Հարկային ծառայողի հերթական ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ անգամ: Հարկային ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո:
3. Հարկային ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է նրա անմիջական դեկավարի պատճառաբանված միջնորդության հիման վրա՝ հարկային մարմնի դեկավարի որոշմամբ կամ հարկային ծառայողի ցանկությամբ:
4. Ատեստավորումն անցկացվում է հարկային ծառայողի անմիջական մասնակցությամբ:
5. Ատեստավորման ենթակա չեն՝
  - 1/ մեկ տարուց պակաս հարկային ծառայության ստաժ ունեցող հարկային ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել.
  - 2/ հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հարկային ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել:

Հղիության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հարկային ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերաբառնալուց հետո ոչ ուշ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ավելի վաղ ատեստավորվելու ցանկություն չեն հայտնել:

6. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անշխատունակ հարկային ծառայողները ենթակա են ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

7. Ատեստավորման ենթակա հարկային ծառայողները, ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, տեղեկացվում են ատեստավորման անցկացման նախին:

8. Ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ անմիջական դեկավարը ներկայացնում է հարկային ծառայողի ծառայողական բնութագիրը:

Ծառայողական բնութագիրը պետք է բովանդակի տվյալներ հարկային ծառայողի նախին, նրա գործնական, մարդկային հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում հարկային ծառայողի՝ իր կատարած աշխատանքների նախին վեց ամիսը մեկ անգամ անմիջական դեկավարին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ վերջինիս եզրակացությունների հիման վրա:

Եթե ատեստավորումների միջև ընկած ժամանակաշրջանում հարկային ծառայողի անմիջական դեկավարն ազատվել է հարկային ծառայության պաշտոնից՝ ատեստավորման արդյունքում գրադեցրած պաշտոնին չհամապատասխանելու կամ սույն օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ, 5-րդ, 7-րդ և 26<sup>1</sup>-րդ հոդվածի առաջին մասի 1-ին և 2-րդ կետերով<sup>(4)</sup> նախատեսված հիմքերով, ապա վերջինիս տվյալ բնութագիրն իրավական ուժ չունի: Եթե նման դեկավարի տվյալ եզրակացություններն ընդգրկում են ատեստավորումների միջև ընկած ժամանակաշրջանի երկու երրորդից ավելին, ապա հարկային ծառայողի վերաբերյալ ծառայողական բնութագիր չի ներկայացվում:

Հարկային ծառայողն ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր ծառայողական բնութագրին:

Սույն հոդվածով սահմանված կարգով ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել հարկային ծառայողի ատեստավորման արդյունքների վրա:

9. Ատեստավորումն անցկացվում է թեստավորման և հարցազրույցի միջոցով, իսկ հարկային մարմնի օպերատիվ ստորաբաժանումներում ծառայություն անցնողների համար նաև ֆիզիկական պատրաստվածության, գենքի և հատուկ միջոցների տիրապետման գծով՝ Հանձնաժողովի սահմանած կարգով:

Թեստերը կազմում, հարցազրույցն անցկացնում և արդյունքները գնահատում է Հանձնաժողովը՝ սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով:

10. Հանձնաժողովը թեստավորման և հարցազրույցի (համապատասխան դեպքերում նաև ֆիզիկական պատրաստվածության, գենքի և հատուկ միջոցների տիրապետման ստուգման) արդյունքներով կայացնում է հետևյալ եզրակացություններից մեկը.

1/ շնորհել ավելի բարձր դասային կամ հատուկ կոչում.

2/ համապատասխանում է գրադեցրած պաշտոնին.

3/ համապատասխանում է գրադեցրած պաշտոնին՝ վերապատրաստում անցնելու և վերապատրաստման արդյունքում դրական գնահատական ստանալու պայմանով.

4/ չի համապատասխանում գրադեցրած պաշտոնին:

Ատեստավորումն ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովը վերոնշյալ եզրակացություններից մեկը ներկայացնում է հարկային մարմնի դեկավարին:

11. Հարկային ծառայողն իրավունք ունի ծանոթանալ ատեստավորման արդյունքներին և բոլորքարկել դրանք մինչև հարկային ծառայողի պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին այդ արդյունքները ներկայացնելը:

12. Հարկային մարմնի դեկավարը սույն հոդվածի տասներորդ մասով նախատեսված եզրակացություններն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում կայացնում է<sup>(5)</sup> հետևյալ որոշումներից մեկը.

1/ հարկային ծառայողին ավելի բարձր դասային կամ հատուկ կոչում շնորհելու<sup>(4)</sup> մասին.

2/ գրադեցրած պաշտոնին հարկային ծառայողի համապատասխանության մասին.

3/ հարկային ծառայողի վերապատրաստում անցկացնելու մասին.

4/ հարկային ծառայողին գրադեցրած պաշտոնից իշեցնելու մասին: Նման որոշում կայացվում է նաև, եթե հարկային ծառայողը վերապատրաստման արդյունքում ստանում է բացասական գնահատական:

5/ հարկային ծառայությունից ազատելու մասին: Նման որոշում կայացվում է նաև, եթե հարկային ծառայողը վերապատրաստման արդյունքում ստանում է բացասական գնահատական:<sup>(\*)</sup>

Հարկային մարմնի դեկավարը հարկային ծառայողի ժամանակավոր անաշխատունակության և արձակուրդում գտնվելու, ինչպես նաև վերապատրաստման ժամանակ ատեստավորման արդյունքների հիման վրա համապատասխան որոշում է ընդունում նրանց աշխատանքի ներկայանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում:

13. Սույն հոդվածով նախատեսված բնութագիրը (ութերորդ մաս), եզրակացությունը (տասներորդ մաս) և որոշումը (տասներկուերորդ մաս) կցվում են հարկային ծառայողի անձնական գործին:

14. Սույն օրենքի հիման վրա հարկային ծառայողի ատեստավորում անցկացնելու կարգը սահմանում է հարկային մարմինը:

## **Հոդված 21. Հարկային ծառայողների վերապատրաստումը**

1. Հարկային ծառայողների վերապատրաստումը անցկացվում է հարկային ծառայողի ատեսատվորման արդյունքներից ելենով՝ հարկային ծառայության տվյալ պաշտոնի նկարագիրը փոփոխվելու, ինչպես նաև հարկային մարմնի դեկավարի որոշած այլ դեպքերում:
2. Հարկային ծառայողի վերապատրաստման անցկացման կարգը և պայմանները սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

### **Հոդված 21<sup>1</sup>. Հարկային ծառայության կոչումների դասակարգումը**

1. Հարկային ծառայության բարձրագույն կոչումներն են՝
  - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության պետական խորհրդական,
  - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի պետական խորհրդական, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության գեներալ-մայոր: <sup>(\*)</sup>
2. Հարկային ծառայության զինավոր կոչումներն են՝
  - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի ավագ խորհրդական, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության գնդապետ,
  - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի ավագ խորհրդական, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության փոխգնդապետ:
3. Հարկային ծառայության ավագ կոչումներն են՝
  - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի ավագ խորհրդական, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության մայոր,
  - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի խորհրդական, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության կապիտան,
  - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի խորհրդական, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության ավագ լեյտենանտ,
  - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի խորհրդական, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության լեյտենանտ: <sup>(\*)</sup>

## **Հոդված 22. Հարկային ծառայության դասային կոչումները**

1. Աշխատանքում ցուցաբերած առանձնահատուկ ծառայությունների, մարդկային և մասնագիտական բարձր հատկանիշների համար հարկային ծառայողներին շնորհվում են դասային կոչումներ: <sup>(\*)</sup>
2. Հարկային ծառայողների համար սահմանվում են հետևյալ դասային կոչումները.
  - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության պետական խորհրդական

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի ավագ խորհրդական,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի ավագ խորհրդական,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի ավագ խորհրդական,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի խորհրդական,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի խորհրդական,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի խորհրդական,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի խորհրդական,

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության պետական խորհրդականի և <sup>(\*)</sup> Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի պետական խորհրդականի դասային կոչումը <sup>(\*)</sup> շնորհում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի ներկայացմանը: <sup>(\*)</sup>

4. Սույն հոդվածի երրորդ մասում չնշված դասային կոչումները շնորհում է հարկային մարմնի ղեկավարը՝ կոչման ներկայացվողի վերադասի ներկայացմամբ:

Դասային կոչման ներկայացմելիս նշվում է ծառայողի կենսագրական տվյալները, աշխատանքի գնահատականը, նրա գործնական և անձնական հատկանիշների բնութագիրը:

Սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված կարգով հարկային ծառայողին կոչման ներկայացմելը չի կարող հետաձգվել հարկային ծառայության անցնելուց կամ հերթական (արտահերթ) դասային կոչումն ստանալուց հետո՝ ավելի քան երեք տարի:<sup>3)</sup>

5. Հարկային ծառայողի վարքագիր կանոնները կոպիտ խախտելու կամ ծառայողական պարտականությունները պարբերաբար չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հարկային ծառայողը կարող է գրկվել դասային կոչումից, հարկային ծառայողի դասային կոչումը կարող է իջեցվել: Ինչպես նաև հարկային ծառայողին հերթական կոչման ներկայացմելը կարող է պատճառաբանված մերժվել:

6. Դասային կոչման իջեցումը կամ դասային կոչումից գրկումը կատարում է տվյալ դասային կոչումը շնորհող պաշտոնատար անձը՝ ծառայողական քննություններ անցկացնող հանձնաժողովի ներկայացմամբ:

### Հոդված 23. Հարկային ծառայության հատուկ կոչումները

1. Հարկային մարմնի օպերատիկ ստորաբաժանման ծառայողների համար սահմանվում են հետևյալ հատուկ կոչումները.

- հարկային ծառայության գեներալ-մայոր,<sup>4)</sup>
- հարկային ծառայության գնդապետ,<sup>2)</sup>
- հարկային ծառայության փոխգնդապետ,
- հարկային ծառայության մայոր,
- հարկային ծառայության կապիտան,
- հարկային ծառայության ավագ լեյտենանտ,
- հարկային ծառայության լեյտենանտ,
- (հանվել է)<sup>4)</sup>

1.1 Հարկային ծառայության գեներալ-մայորի հատուկ կոչումը շնորհում է Լեռնային Ղարաբաղյան հանրապետության Նախագահը:<sup>5)</sup>

2. Սույն հոդվածի 1.1-ին մասում չնշված հատուկ կոչումները շնորհում է հարկային մարմնի ղեկավարը՝ հարկային մարմնի օպերատիկ ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ:<sup>6)</sup>

Հատուկ կոչման ներկայացմելիս նշվում են ծառայողի կենսագրական տվյալները, աշխատանքի գնահատականը, նրա գործնական և անձնական հատկանիշների բնութագիրը, աշխատանքի ստաժը, հատուկ կամ դասային կոչում ունենալու դեպքում՝ կոչումները և դրանք հարկային ծառայողին շնորհվելու ամսաթիվը:

3. Սահմանվում են հատուկ կոչում կրելու հետևյալ ժամկետները.

- <sup>4)</sup>լեյտենանտի համար՝ մեկ տարի.
- հարկային ծառայության ավագ լեյտենանտի, կապիտանի և մայորի համար՝ երեք տարի.
- հարկային ծառայության փոխգնդապետի համար՝ 4 տարի:<sup>4)</sup>

3<sup>1</sup>. Առանձին դեպքերում հարկային ծառայության հատուկ կոչումներ կարող են շնորհվել նաև այլ հարկային ծառայողների:<sup>6)</sup>

4. Հարկային ծառայողի վարքագիր կանոնները կոպիտ խախտելու կամ ծառայողական պարտականությունները պարբերաբար չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հարկային ծառայողին հերթական հատուկ կոչման ներկայացմելը կարող է պատճառաբանված մերժվել:

5. Հարկային ծառայողի հատուկ կոչումը կարող է իջեցվել սույն հոդվածի չորրորդ մասում նախատեսված դեպքերում: Հարկային ծառայողները հատուկ կոչումից կարող են գրկվել աշխատանքից հեռացվելու և սույն հոդվածի չորրորդ մասում նախատեսված դեպքերում:

Հատուկ կոչման իջեցումը կամ հատուկ կոչումից գրկումը կատարում է տվյալ հատուկ կոչումը շնորհող պաշտոնատար անձը՝ ծառայողական քննություններ անցկացնող հանձնաժողովի ներկայացմամբ:

#### Հոդված 23.1. Հարկային ծառայության պաշտոններին համապատասխանող հարկային ծառայության կոչումները

1. Հարկային ծառայության բարձրագույն պաշտոններից հարկային մարմնի ղեկավարի պաշտոնին համապատասխանող հարկային ծառայության կոչումների վերին սահմանը Լեռնային Ղարաբաղյան հանրապետության հարկային ծառայության պետական խորհրդականի կոչումն է:

2. Հարկային ծառայության բարձրագույն պաշտոններից հարկային մարմնի ղեկավարի տեղակալների, հարկային մարմնի օպերատիկ ստորաբաժանման ղեկավարի պաշտոններին համապատասխանող հարկային ծառայության կոչումների վերին սահմանը Լեռնային Ղարաբաղյան հանրապետության հարկային ծառայության առաջին դասի պետական խորհրդականի կամ հարկային ծառայության գեներալ-մայորի կոչումն է:

3. Հարկային ծառայության բարձրագույն պաշտոններից հարկային մարմնի վարչության պետի, հարկային տեսչության պետի պաշտոնին համապատասխանող հարկային ծառայության կոչումների վերին սահմանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի ավագ խորհրդականի կամ հարկային ծառայության գնդապետի կոչումն է:

4. Հարկային ծառայության գլխավոր պաշտոններին համապատասխանող հարկային ծառայության կոչումների վերին սահմանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի ավագ խորհրդականի կամ հարկային ծառայության փոխզնդապետի կոչումն է:

5. Հարկային ծառայության առաջատար պաշտոններից վերադաս հարկային մարմնի գլխավոր օպերիխագորի, վերադաս հարկային մարմնի գլխավոր հարկային տեսչի, վերադաս հարկային մարմնի գլխավոր մասնագետի, վերադաս հարկային մարմնի խմբի ղեկավարի, վերադաս հարկային մարմնի ղեկավարանի, վերադաս հարկային մարմնի ավագ հետաքննիչի, հարկային տեսչության բաժնի պետի պաշտոնին համապատասխանող հարկային ծառայության կոչումների վերին սահմանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի ավագ խորհրդականի կամ հարկային ծառայության մայորի կոչումն է:

6. Հարկային ծառայության առաջատար մյուս պաշտոններից վերադաս հարկային մարմնի ավագ օպերիխագորի, վերադաս հարկային մարմնի ավագ հարկային տեսչի, վերադաս հարկային մարմնի առաջատար մասնագետի, վերադաս հարկային մարմնի առաջատար մասնագետ-ղեկավարանի, վերադաս հարկային մարմնի քննիչի, վերադաս հարկային մարմնի հետաքննիչի, հարկային տեսչության գլխավոր մասնագետի պաշտոնին համապատասխանող հարկային ծառայության կոչումներին հարկային ծառայության առաջին դասի խորհրդականի կամ հարկային ծառայության կապիտանի կոչումն է:

7. Հարկային ծառայության վերադաս հարկային մարմնի օպերիխագորի, վերադաս հարկային մարմնի հարկային տեսչի, վերադաս հարկային մարմնի առաջին կարգի մասնագետի, հարկային տեսչության ավագ հարկային տեսչի, հարկային տեսչության առաջատար մասնագետի պաշտոններին համապատասխանող հարկային ծառայության կոչումների վերին սահմանը հարկային ծառայության երրորդ դասի խորհրդականի կամ հարկային ծառայության պավագանչի կոչումն է:

8. Հարկային ծառայության կրտսեր մյուս պաշտոններին համապատասխանող հարկային ծառայության կոչումների վերին սահմանը հարկային ծառայության երրորդ դասի խորհրդականի կամ հարկային ծառայության լեյտենանտի կոչումն է:<sup>2), 3), 4), 6), 8)</sup>

#### Հոդված 24. Հարկային ծառայուղների վարձատրությունը և խրախուսումը

1. Հարկային ծառայուղների վարձատրության, այդ թվում՝ իհմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկմերի և չափերի, աշխատավարձի բնականոն աճի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ գրաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով:<sup>10)</sup>

2. (ուժը կորցրած է ձանաչվել) <sup>\*1), \*2), \*4), \*6), \*10)</sup>

3. (ուժը կորցրած է ձանաչվել) <sup>\*10)</sup>

4. (ուժը կորցրած է ձանաչվել) <sup>\*1), \*2), \*3), \*8), \*10)</sup>

5. (ուժը կորցրած է ձանաչվել) <sup>\*10)</sup>

6. Երկարամյա ծառայության, ծառայուղական պարտականությունները և հաստուկ առաջարդանքները գերազանց կատարելու, ինչպես նաև աշխատանքի նկատմամբ նվիրվածության համար հարկային ծառայուղի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները.

1/ կարգապահական ստոյֆի համուս.

2/ դրամական պարզեցվածում.

3/ հուշանվերով պարզեցվածում.

4/ (ուժը կորցրած է ձանաչվել) <sup>\*10)</sup>

5/ հարկային մարմնի ղեկավարի կողմից շնորհակալության հայտարարում.

6/ արտահերթ հաստուկ և (կամ) դասային կոչման շնորհում.

7/ (ուժը կորցրած է ձանաչվել) <sup>\*7)</sup>

8/ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինակելի հարկային ծառայող» կրծքանշանով պարզեցվածում:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի 1-ին, 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված խրախուսան միջոցները կիրառում է հարկային մարմնի ղեկավարը, իսկ վեցերորդ մասի 2-րդ կետով նախատեսված խրախուսումն իրականացվում է «Պետական պաշտոններ գրաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին համապատասխան։<sup>10)</sup>

8. <sup>7)</sup> «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինակելի հարկային ծառայող» կրծքանշանով պարզեցվածումը հարկային մարմնի ղեկավարի ներկայացմամբ իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի որոշմամբ։

Հարկային մարմնի ղեկավարին<sup>7)</sup> «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինակելի հարկային ծառայող» կրծքանշանով պարզեցնելու մեջ է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ:

#### Հոդված 25. Հարկային ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվությունը

1.Անբարեխիղձ աշխատանքի, ծառայողական պարտականությունների նկատմամբ անպատասխանատու վերաբերնունքի և անփութության համար հարկային ծառայողների նկատմամբ կիրառվում են կարգապահական պատասխանատվության հետևյալ տեսակները.

1/ բանավոր նկատողություն.

2/ գրավոր նկատողություն.

3/ կոչման իշեցում.

4/ նյութական պատասխանատվության կիրառում.

5/ զբաղեցրած պաշտոնից իշեցում<sup>2)</sup>

6/ հարկային ծառայությունից ազատում<sup>2)</sup>

Սույն հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված կարգապահական պատասխանատվության ենթարկում է հարկային ծառայողի անմիջական ղեկավարը, իսկ հարկային ծառայության պաշտոնների անվանացանկի Ա, Բ խմբերի հարկային ծառայողների, ինչպես նաև Գ, Դ խմբերի վերադաս հարկային մարմնի հարկային ծառայողների և հարկային տեսչության բաժնի պետի դեպքում՝ նաև հարկային մարմնի ղեկավարը: Սույն հոդվածի առաջին մասի 2-6-րդ կետերով նախատեսված կարգապահական պատասխանատվության ենթարկում է հարկային մարմնի ղեկավարը՝ հարկային մարմնի ծառայուղական քննություններ անցկացնող հանձնաժողովի եղբակացության հիման վրա:<sup>2), 4)</sup>

3. Հարկային ծառայողի նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվության վերաբերյալ նշում է կատարվում հարկային ծառայողի անձնական գործում:

#### Հոդված 26. Հարկային ծառայուղին հարկային ծառայությունից ազատելու հիմքերը

1. Հարկային ծառայողին հարկային ծառայությունից ազատելու հիմքերն են՝

1) հարկային ծառայողի անձնական դիմումը,

2) սույն օրենքի 13-րդ հոդվածի սահմանափակումները չպահպանելը,

3) հարկային ծառայողին պաշտոնի նշանակման՝ սույն օրենքի սահմանված կարգի խախտումը,

4) ատեսավորման արդյունքում սույն օրենքի 20-րդ հոդվածի տասներկուերրորդ մասի 5-րդ կետով սահմանված դեպքերը,

5) հարկային ծառայողի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելը,

6) սույն օրենքի 42-րդ հոդվածով նախատեսված դեպքերը,

7) սույն օրենքի 19-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն փորձաշրջանը չանցնելը,

8) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան չորս ամիս աշխատանքի չներկայանալը (չհաշված հղության և ծննդաբերության արձակուրդը),

9) սույն օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով նախատեսված հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալը,

10) եկամուտների հայտարարագիր չներկայացնելը,

11) հարկային ծառայողների հաստիքները կրծատվելը:

12) սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը:<sup>6)</sup>

2. Հարկային ծառայողին պաշտոնից ազատում է նրան պաշտոնի նշանակելու իրավասությունը ունեցող պաշտոնատար անձը:

3. Հարկային ծառայությունից ազատվելու դեպքում հարկային ծառայողը հարկային մարմին է համձնում իր ծառայուղական վկայականը, իրեն ամրագրված գենքը, համագետսղը և պաշտոնական պարտականությունների կատարման հետ կապված այլ միջոցներ։<sup>4)</sup>

#### Հոդված 26<sup>1</sup>. Հարկային ծառայողի զբաղեցրած պաշտոնը իշեցնելու հիմքերը

Հարկային ծառայողի զբաղեցրած պաշտոնը իշեցնելու հիմքերն են՝

1) ատեսավորման արդյունքում սույն օրենքի 20-րդ հոդվածի տասներկուերրորդ մասի 4-րդ կետով սահմանված դեպքերը,

2) սույն օրենքի 25-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով նախատեսված կարգապահական պատասխանատվության ենթարկվելը,

3) սույն օրենքի 25-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելը:

Հարկային ծառայողի պաշտոնը իշեցնում է նրան պաշտոնում նշանակելու իրավասությունը ունեցող պաշտոնատար անձը:<sup>4)</sup>

#### Գլուխ IV Հարկային ծառայության առանձնահատուկ պայմանները

##### Հոդված 27. Հարկային մարմնի ֆինանսավորումը

Հարկային մարմինը ֆինանսավորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

##### Հոդված 28. Հարկային մարմնի գարգացման և պարզաւորման<sup>\*10)</sup> ֆոնդը

1. Հարկային վարչարարության իրավանացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հարկային մարմնում գործում է հարկային մարմնի համակարգի գարգացման ֆոնդ (այսուհետ՝ ֆոնդ):

##### 2. Ֆոնդը կազմավորվում է՝

1) հարկային մարմինների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված հարկերը, տուրքերը, պարտադիր այլ վճարները, հարկվող շրջանառությունները և եկամուտները թաքցնելը կամ պակաս ցույց տալը թացահայտելու հետևանքով<sup>(3),\*(5)</sup> լրացուցիչ գանձվող հարկերից, տուրքերից, պարտադիր այլ վճարներից և որանց հետ կապված, հարկային<sup>(5),\*(9)</sup> օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական պատժամիջոցներից, ինչպես նաև հարկային<sup>(5),\*(9)</sup> օրենսդրությամբ<sup>(3)</sup> նախատեսված սույնագներից (այսուհետ՝ լրացուցիչ գումարներ) տասը տոկոս մասհանումների հաշվին:

Հարկային մարմինների կողմից հարկային օրենսդրությամբ սահմանված և հաշվառված տույժերից ֆոնդի մասհանումներ չեն կատարվում, եթե առկա չեն թաքցված կամ պակաս ցույց տրված հարկի, տուրքի, պարտադիր այլ վճարի գումարներ.

2) հարկային ծառայողների նկատմամբ սույն օրենքի 42-րդ հոդվածի համաձայն կիրառվող նյութական պատասխանատվության արդյունքում գանձվող գումարների հաշվին:

3) Վարչական իրավախախոտների վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրով հարկային մարմնի քննությամբ վերապահված իրավախախոտների գործերով նշանակված վարչական սույնագների տասը տոկոս մասհանումների հաշվին.

4) «Դրամարկղային գործառնությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված սույնագների տասը տոկոս մասհանումների հաշվին:<sup>(6)</sup>

##### 3. Ֆոնդը ծախսվում է՝

1) համակարգչային, կապի և տրանսպորտային միջոցների ծեռքբերման ու շահագործման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և նյութատեխնիկական ապահովածության համար.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օպերատիվ հետախուզական, հետաքննչական և (կամ) քննչական<sup>(6)</sup> միջոցառումներ իրականացնելիս ծախսեր կատարելու համար.

3) լրացուցիչ գումարներ անմիջապես հայտնաբերողների, հարկային մարմինների աշխատանքներում ներդրում ունեցողների դրամական պարզեցման և օգնության համար, ընդ որում, ֆոնդից պարզեցման ուղղվող միջոցները չեն կարող գերազանցել հարկային մարմնի աշխատավարձի ֆոնդի երեսուն տոկոսը.<sup>(10)</sup>

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հսկչ գնումների իրականացման համար.

5) շենքերի, շինությունների ծեռքբերման և շահագործման<sup>(8)</sup>, աշխատանքային պայմանների բարելավման համար.

6) հարկային մարմնի կամ հարկային ծառայողի կողմից հարկային օրենսդրության դրույթների խախտման հետևանքով սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված գումարները հարկ վճարողին փոխհատուցելու համար.

7) հարկային վարչարարության իրականացմանն ու համակարգի գարգացմանն ուղղված այլ ծախսեր կատարելու համար.<sup>(8)</sup>

4. Լրացուցիչ գումարի օգտագործումն իրականացվում է միայն տվյալ գումարին համապատասխանող հայտնաբերված լրացուցիչ գումարն պետական բյուջե<sup>(5)</sup> մուտքագրվելուն (վերականգնվելուն) համամասնորեմ<sup>(3)</sup>, իսկ հայտնաբերված լրացուցիչ գումարի վճարման պարտավորությունը հաստատող՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության դեպքում՝ ամբողջությամբ:<sup>(4)</sup> Սույն հոդվածի 1-ին մասում նշված նախակներով ֆոնդի միջոցները մուտքագրվում և օգտագործվում են հարկային մարմնի ղեկավարի սահմանած կարգով:<sup>(2),\*(3)</sup>

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեով հարկային մարմնի պահպանման ծախսերում կարող է նախատեսվել նաև պարզեցման ֆոնդ:<sup>(10)</sup>

### **Հոդված 29. Հարկային ծառայողների համագգեստը**

1. Հարկային մարմնի աշխատակիցները հարկային մարմնի սահմանած կարգով կրում են համագգեստ:

2. Հարկային ծառայողի համագգեստի նկարագիրը և կրելու պայմանները հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:<sup>2)</sup>

### **Հոդված 30. Հարկային ծառայողների գենքը**

1. Հարկային ծառայողներին գենք տրամադրելու, գենքը պահելու, կրելու և օգտագործելու կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

2. Հարկային մարմնին գենքով պահովելու (տրամադրելու), գենքը պահպանելու կարգը, գենքի ու ռազմամթերքների տեսակների ցանկը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

### **Հոդված 31. Ֆիզիկական ուժի կիրառումը (գործադրումը)**

Հարկային ծառայողներն իրավախախտների նկատմամբ իրավունք ունեն կիրառել (գործադրել) ֆիզիկական հարկադրանք (ուժ):

1/ իրենց և (կամ) այլ անձանց վրա հարձակումը կանխելու դեպքում.

2/ հարկային մարմնին պատկանող կամ վերջիններիս հսկողության տակ գտնվող շինությունների, կառուցների և փոխադրամիջոցների վրա հարձակումը կանխելու դեպքում.

3/ դիմադրություն ցույց տվող իրավախախտում կատարած անձին ձերբակալելու կամ ծառայողական շինություն հասցնելու դեպքում, եթե այդ դիմադրությունը կարող է վճաս պատճառել շրջապատին կամ իրենց:

### **Հոդված 32. Հատուկ միջոցների կիրառումը**

1. Հարկային ծառայողները հատուկ միջոցները (ձեռնաշղթաներ, փականքները բացելու գործիքներ) կիրառում են՝

1/ իրենց և (կամ) այլ անձանց վրա հարձակումը կանխելու համար.

2/ հարկային մարմնին պատկանող կամ վերջիններիս հսկողության տակ գտնվող շինությունների, կառուցների և փոխադրամիջոցների վրա հարձակումը կանխելու համար.

3/ դիմադրություն ցույց տվող իրավախախտում կատարած անձին ձերբակալելու կամ ծառայողական շինություն հասցնելու համար, եթե այդ դիմադրությունը կարող է վճաս պատճառել շրջապատին կամ իրենց:

Հղության կամ հաշմանդամության ակնհայտ նշաններով անձանց և անչափահասների նկատմամբ հատուկ միջոցներ չեն կիրապում, բացառությամբ նշված անձանց կողմից գինված դիմադրություն ցույց տալու, խմբակային կամ այլ հարձակումների, մարդկանց կյանքի և առողջության համար վտանգավոր գործողությունների դեպքերի:

2. Օպերատիվ հետախուզական միջոցներ հարկային ծառայողները կիրառում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում և կարգով:

### **Հոդված 33 Զենքի գործադրումը**

1. Զենք կրելու իրավունք ունեցող հարկային ծառայողն իրավունք ունի դա գործադրել՝

1) իր կամ այլ անձի վրա գինված հարձակումը կանխելու համար, եթե առկա է նրանց կյանքին կամ առողջությանը սպառնացող իրական վտանգ.

2) զենքի հափշտակման փորձը կանխելու համար:

2. Մինչ զենքի գործադրումը հարկային ծառայողը պետք է կատարի նախագուշական կրակոց, բացառությամբ սույն օրենքի 34-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերում:

3. Արգելվում է զենքի գործադրումը հղության կամ հաշմանդամության ակնհայտ նշաններ ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից գինված դիմադրություն ցույց տալու և հարկային ծառայողի կյանքին ու առողջության իրական վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

**Հոդված 34. Հարկային ծառայողների կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի օգտագործման պայմանները**

1. Նախքան ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի օգտագործման իրավասություն ստանալը, այնուհետև պարբերաբար, հարկային ծառայողները հարկային մարմնի սահմանած կարգով անցնում են հատուկ պատրաստություն և պիտանիության ստուգումներ: Նշված անձինք պարտավոր են ունենալ նաև տուժողին առաջին բուժօգնություն ցույց տալու հմտություն:

2. Հարկային ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք կիրառելուց (գործադրելուց) առաջ նախագուշացնում է այդ մտադրության մասին, տալով իր պահանջները կատարելու համար

բավարար ժամանակ, բացառությամբ անակնկալ, գինված, ռազմական տեխնիկայի և փոխադրամիջոցների օգտագործմամբ հարձակումների և այլ իրադրությունների, երբ նման նախագործացումը ստեղծված իրավիճակում անտեղի է, անհնարին կամ կարող է առաջացնել վտանգ իր կամ այլ անձանց կյանքին և առողջությանը, հանգեցնել այլ ծանր հետևանքների:

3. Իրավախախտման վտանգավորության աստիճանից և դա կատարող անձի ինքնությունից, ինչպես նաև դիմադրության ուժից ելելով՝ վտանգի վերացման ուղղված գործողությունների հետևանքով հնարավոր վնասները հարկային ծառայողի կողմից պետք է հասցեն նվազագույնի:

4. Ֆիզիկական ուժի, հասուլ միջոցների և գենքի կիրառման (գործադրման) դեպքում հարկային ծառայողն անմիջապես գեկուցում է վերարասության կարգով, իսկ գենքի կիրառման բոլոր դեպքերի մասին՝ նաև դատախազության համապատասխան մարմիններին:<sup>8)</sup>

Ֆիզիկական ուժի, հասուլ միջոցների և գենքի կիրառման (գործադրման) դեպքում հարկային ծառայողն անմիջապես գեկուցում է վերարասության կարգով, իսկ գենքի կիրառման բոլոր դեպքերի մասին՝ նաև դատախազության համապատասխան մարմիններին:<sup>8)</sup>

5. Ֆիզիկական ուժ, հասուլ միջոցներ և գենք օգտագործելու լիազորությունների սահմանազանցումն առաջացնում է պատախանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

#### Հոդված 35. Հարկային ծառայողի պահանջների պարտադիր լինելը

1. Հարկային ծառայողի՝ իր իրավասության սահմաններում առաջադրած պահանջները պարտադիր են բոլոր պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իհմնարկների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների համար:

2. Հարկային ծառայողի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը, փաստաթղթերը և դրանց պատճենները նրա գրավոր պահանջով տրվում են անվճար, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3. Հարկային ծառայողի պահանջները չկատարելը կամ նրա պարտականությունների կատարմանը խոչընդոտելն առաջացնում է օրենքով սահմանված պատախանատվություն:

4. Հարկային ծառայողը, ներկայացնելով ծառայողական վկայականը, կարող է պահանջել՝ սոուգել ապօրինի գործունեություն իրականացնել՝ կամ ապօրինի գործունեություն իրականացնելու մեջ կասկածվող անձանց անձը հաստատող փաստաթղթերը՝ սոուգումների բնագավառը կարգավորող օրենսդրությամբ սահմանված և հարկային մարմնի իրավասությունների շրջանակներում գործողություններ իրականացնելու նպատակով:<sup>2)</sup>

#### Հոդված 36. Համագործակցությունն այլ մարմինների հետ

Իր գործառույթներն իրականացնելիս հարկային մարմինը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, այդ թվում՝ իրավապահ մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց հետ:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են աջակցել հարկային մարմնին՝ իր գործառույթներն իրականացնելիս:

#### Հոդված 37. Հարկային ծառայողներին պատճառված վնասի հատուցման իրավունքը

1. Ծառայողական գործունեության կապակցությամբ հարկային ծառայողին վնասվածքներ պատճառելու դեպքում, որոնք բացառում են հարկային ծառայություն անցնելու նրա հետագա հնարավորությունը, նրան ամեն ամիս վճարվում է փոխհատուցում՝ այդ կապակցությամբ նշանակված կենսաթոշակի և նրա անսական միջին վաստակի տարբերության չափով:

2. Ծառայության ընթացքում կամ ազատվելուց հետո հարկային ծառայողի մահվան դեպքում, եթե դա առաջացել է ծառայողական գործունեության կապակցությամբ նրան վնասվածքներ պատճառելու հետևանքով, հարկային ծառայողի խնամքի տակ գտնվող ընտանիքի անչափահաս և (կամ) անաշխատունակ անդամներին ամեն ամիս վճարվում է փոխհատուցում՝ մահացածի ամսական միջին վաստակից նրանց բաժին ընկնող մասի և կերակրողին կորցնելու համար նշանակված կենսաթոշակի չափերի միջև տարբերության չափով։ Անսական միջին վաստակից մահացածին բաժին ընկնող մասը որոշելու համար մահացածի ամսական միջին վաստակը բաժանվում է նրա խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամների, այդ թվում՝ աշխատունակների թվի վրա։

3. Ծառայողական գործունեության կապակցությամբ հարկային ծառայողին կամ նրա ընտանիքի անդամներին պատկանող գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման լրիվ ծավալով, ներառյալ՝ բաց թողնված օգուտը։

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված վնասները հատուցվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ 3-րդ կետով նախատեսված վնասները՝ վնասը պատճառողի հաշվին։

#### **Հոդված 38. Հարկային ծառայության տարբերանշանը և կնիքը**

1. Հարկային ծառայությունն ունի տարբերանշան, որի նկարագիրը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը: Հարկային ծառայության տարբերանշանը հարկային ծառայողների համազգեստի պարտադիր ատրիբուտ է:

2. Հարկային մարմինն ունի հարկային ծառայության տարբերանշանի պատկերով և իր անվամբ կնիք:

#### **Գլուխ V. Հարկային ծառայողի պարտականությունները, իրավունքները և պատասխանատվությունը**

#### **Հոդված 39. Հարկային ծառայողի պարտականությունները**

Հարկային ծառայողի պարտականություններն են՝

1/ իր իրավասությունների սահմաններում հարկային մարմնի լիազորությունների իրականացումը.

2/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում հարկ վճարողների հարկային պարտավորությունների հաշվարկումը, ինչպես նաև սահմանված կարգով հաշվարկված գումարների վճարման առաջադրումը.

3/ դեկավար մարմինների և պաշտոնատար անձանց սահմանված կարգով տրված հանձնարարականների և ընդունած որոշումների կատարումը.

4/ օրենքով սահմանված դեպքերում հետաքննության գործերի սկսումը.

4<sup>1</sup>) օրենքով սահմանված դեպքերում նախաքննության իրականացումը.<sup>(6)</sup>

5/ պետական, ծառայողական և օրենքով պահպանվող այլ գաղտնիքն օրենքով սահմանված կարգով պահպանելը՝ այդ բվում ծառայությունը դադարեցնելուց հետո.

6/ հարկ վճարողների, նրանց ներկայացուցիչների և հարկային հարաբերությունների այլ մասնակիցների նկատմամբ պատասխանատու և ուշադիր վերաբերունքի ցուցաբերումը.

7/ օրենսդրությամբ սահմանված չափից ավելի վճարված հարկերի և պարտադիր այլ վճարների հաշվանցման (կամ վերադարձման համար անհրաժեշտ՝ օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների, տեղեկանքների տրամադրումը) աշխատանքների պատշաճ կատարումը.

8/ հարկային ծառայության գործառույթների<sup>(7)</sup> և հարկային ծառայողի վարքագծի կանոնների պահանջներով խստագույնս առաջնորդվելը.

9/ օրենքով սահմանված կարգով եկամուտները հայտարարագրելը:

#### **Հոդված 40. Հարկային ծառայողի իրավունքները**

Հարկային ծառայողի իրավունքներն են՝

1/ գրաղեցրած պաշտոնում իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.

2/ իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատականներին և այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ ներկայացնելը.

3/ ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.

4/ սահմանված կարգով որոշումներ ընդունելը, հարցերի քննարկումներին մասնակցելը.

5/ ծառայողական քննություն անցկացնել պահանջելը՝ իր կարծիքով իր նկատմամբ անհիմն մեղադրանքները և կասկածները վերացնելու նպատակով կամ իր նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու դեպքերում.

6/ անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովածությունը.

7/ սոցիալական և իրավական պաշտպանությունը.

8/ սոցիալական ապահովությունը.

9/ սահմանված կարգով հարկային ծառայության հաստուկ և (կամ) դասային կոչման բարձրացումը.

10/ ատեստավորման արդյունքները բողոքարկելը.

11/ հարկային ծառայության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

12/ օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

#### **Հոդված 41. Հարկային ծառայողի պատասխանատվությունը**

1. Սույն օրենքի խախտման համար հարկային ծառայողները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

2. Եթե սույն օրենքի, հարկային ծառայության գործառույթների<sup>(8)</sup> կամ հարկային ծառայողի վարքագծի կանոնների խախտումները չեն հանգեցրել քրեական կամ վարչական պատասխանատվության կիրառման,

ապա հարկային ծառայողները սույն օրենքի 42-րդ հոդվածով սահմանված կարգով կրում են նյութական պատասխանատվություն:

#### **Հոդված 42. Հարկային ծառայողի նյութական պատասխանատվությունը**

1. Սույն օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պարտականությունները չկատարելու (ոչ պատշաճ կատարելու) համար, հարկային ծառայության գործառույթներին<sup>2)</sup> համապատասխան հարկային մարմնի պաշտոնատար անձը (անձինք):

1/ ստանում է (են) գրավոր նախազգուշացում, եթե խախտման հետևանքով բյուջե վճարման ենթակա ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) հարկային պարտավորության գումարը կազմում է 100.000-ից մինչև 1.000.000 դրամ՝ ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) գումարի մինչև 5 տոկոսի չափով.

2/ վճարում է (են) տուգանք, եթե խախտման հետևանքով բյուջե վճարման ենթակա ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) հարկային պարտավորության գումարը կազմում է 100.000-ից մինչև 1.000.000 դրամ՝ ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) գումարի մինչև 5 տոկոսի չափով.

3/ վճարում է (են) տուգանք, եթե խախտման հետևանքով բյուջե վճարման ենթակա ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) հարկային պարտավորության գումարը կազմում է 1.000.001-ից մինչև 5.000.000 դրամ՝ ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) գումարի մինչև 10 տոկոսի չափով.

4) եթե խախտման հետևանքով բյուջե վճարման ենթակա ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) հարկային պարտավորության գումարը կազմում է 5.000.000 դրամից ավելի, ապա վճարում է (են) տուգանք ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) գումարի մինչև քսան տոկոսի չափով կամ ազատվում է (են) հարկային ծառայությունից՝ ծառայողական անհամապատասխանության հիմնավորմամբ:  
<sup>2)</sup>

2. Սույն օրենքի 39-րդ հոդվածի 3-4-րդ կետերով սահմանված պարտականությունները չկատարելու համար, հարկային ծառայության գործառույթներին<sup>2)</sup> համապատասխան, հարկային մարմնի պաշտոնատար անձն առաջին անգամ ստանում է գրավոր նկատողություն:

Գրավոր նկատողությունն ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում համանման խախտում կատարելու դեպքում հջեցվում է հարկային մարմնի պաշտոնատար անձի հարկային ծառայության դասային կամ հատուկ կոչումը:

3. Սույն օրենքի 39-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պարտականությունը չկատարելու դեպքում, հարկային ծառայության գործառույթներին<sup>2)</sup> համապատասխան, առաջին անգամ հջեցվում է հարկային մարմնի պաշտոնատար անձի հարկային ծառայության դասային կամ հատուկ կոչումը, իսկ եթե խախտումը տեղի է ունեցել հարկային ծառայությունից ազատվելուց հետո, ապա նա գրկում է հատուկ և դասային կոչումից:

Մեկ տարվա ընթացքում համանման խախտում կատարելու դեպքում հարկային մարմնի պաշտոնատար անձն ազատվում է հարկային ծառայությունից՝ ծառայողական անհամապատասխանության հիմնավորմամբ:

4. Սույն օրենքի 39-րդ հոդվածի 6-7-րդ կետերով սահմանված պարտականությունը չկատարելու կամ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չկատարելու դեպքում, հարկային ծառայության գործառույթներին<sup>2)</sup> համապատասխան, հարկային մարմնի պաշտոնատար անձն առաջին անգամ ստանում է գրավոր նկատողություն:

Գրավոր նկատողությունն ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, համանման խախտում կատարելու դեպքում հջեցվում է հարկային մարմնի պաշտոնատար անձի հարկային ծառայության դասային կամ հատուկ կոչումը:

5. Սույն օրենքի 39-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված պարտականությունները չկատարելու համար, եթե դա չի առաջացրել սույն հոդվածի առաջինից չորրորդ մասերով նախատեսված պատասխանատվությունն, հարկային ծառայության գործառույթներին<sup>2)</sup> համապատասխան, հարկային մարմնի պաշտոնատար անձը՝

1/ ստանում է գրավոր նկատողություն, եթե խախտումը տեղի է ունեցել պաշտոնատար անձի անզգուշությամբ.

2/ հջեցվում է հարկային ծառայության դասային կամ հատուկ կոչումը եթե խախտումը տեղի է ունեցել դիտավորյալ.

3/ դասային կամ հատուկ կոչումը հջեցնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում համանման խախտում կատարելու դեպքում ազատվում է հարկային ծառայությունից՝ ծառայողական անհամապատասխանության հիմնավորմամբ :

6. Սույն հոդվածով նախատեսված նյութական պատասխանատվության միջոցները կիրառվում են կատարված խախտումների փաստերը ծառայողական քննությամբ հաստատվելուց հետո:

7. Սույն հոդվածով նախատեսված պատասխանատվության կոնկրետ տեսակը, նյութական պատասխանատվության չափերը, ինչպես նաև խախտում թույլ տված հարկային ծառայողին

(ծառայողներին), որի (որոնց) նկատմամբ կիրառվում են նյութական պատասխանատվության միջոցները ներկայացնում է հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովը:

Նյութական պատասխանատվությունը կիրառվում է հարկային մարմնի դեկավարի հրամանով:

8. Նյութական պատասխանատվության կիրառման արդյունքում գանձված գումարները մուտքագրվում են հարկային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնի:

#### **Հոդված 43. Ծառայողական քննության անցկացումը<sup>\*2)</sup>**

1. Ծառայողական քննություն անցկացվում է հարկային մարմնի դեկավարի որոշմամբ:<sup>\*2)</sup>

2. Հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է հարկային մարմնի դեկավար՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով առաջարկված թեկնածուներից:

3. Հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովը՝

1) հսկողություն է իրականացնում հարկային ծառայողների վարքագիր կանոնների նկատմամբ.

2) ծառայողական քննություն է անցկացնում հարկային մարմնի դեկավարի սահմանած կարգով.

3) եղակացություն է ներկայացնում հարկային մարմնի դեկավարին՝ սույն օրենքի 11<sup>րդ</sup> հոդվածի 15-րդ կետով սահմանած կարգով հետևազարդացնում ապահովելու նպատակով:<sup>\*2), \*8)</sup>

4. Հարկային ծառայողների ծառայողական քննություն իրականացնում է հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովը:<sup>\*2), \*8)</sup>

#### **Հոդված 43<sup>1</sup>. Հարկային մարմնի և հարկային ծառայողի գործողությունների գանգատարկումն ու բողոքարկումը**

Հարկային մարմնի կամ հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են գանգատարկել հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին կամ բողոքարկել դատարան:

Հարկային մարմնի կամ հարկային ծառայողի գործողությունների, անգործության, ինչպես նաև հարկային վեճերի լուծման նպատակով գործում է հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը:

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Գանգատարկման հանձնաժողով) հարկային մարմնի դեկավարի կողմից ձևավորվող, վերադաս հարկային մարմնում մշտակես գործող մարմին է, որը բաղկացած է նախագահից և 4 ամենամից, որոնք իրենց աշխատանքը հանձնաժողովում համատեղում են իրենց գրադերած հարկային ծառայության պաշտոնների հետ։ Գանգատարկման հանձնաժողովի որոշումներն իրավագոր են, եթե այդ որոշումների կայացնալը մասնակել է առնվազն 4 հոգի։ Որոշումները կայացվում են բաց քվեարկությամբ, պարզ մեծամասնության ձևով։

Գանգատարկման հանձնաժողովին դիմում-գանգատ ներկայացրած անձը համապատասխան նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին նախակես ծանուցվում է։ Գանգատարկման հանձնաժողովի նիստին կարող են մասնակել դիմում-գանգատ ներկայացրած անձը, վերջինիս գիշակոր հաշվապահը և (կամ) դիմում-գանգատ ներկայացրած անձի լիազորած անձը (մասնագետը)։ Դիմում-գանգատները հարկային մարմնի կողմից քննության են առնվում, և դրանց վերաբերյալ որոշումներ են ընդունվում 30 օրվա ընթացքում։ Առանձին դեպքերում հարկային մարմնի դեկավարի որոշմամբ նշված ժամկետը կարող է երկարածվել 15 օրով, ինչի մասին իրագեկվում է դիմումատուն։<sup>\*6)</sup> Գանգատարկման հանձնաժողովի նիստի ավարտից հետո՝<sup>\*6)</sup> Գանգատարկման հանձնաժողովը դիմում-գանգատ ներկայացնողին ուղարկում է դիմում-գանգատի վերաբերյալ հանձնաժողովի կայացրած որոշումը։

Հարկային մարմնի դեկավարը սահմանում է Գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը, անհատական կազմը<sup>\*8)</sup> Գանգատարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-գանգատի ձևը և դիմում-գանգատ ներկայացրած անձին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևը։<sup>\*2)</sup>

#### **Հոդված 44. Հարկ վճարողին հասցված վնասի փոխհատուցումը**

Հարկային մարմնի կամ հարկային ծառայողի սույն օրենքի կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային հարաբերությունները կարգավորող այլ ակտերի դրույթների խախտումների հետևանքով հարկ վճարողին հասցված վնասը հատուցվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ սույն օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով նախատեսված դեպքերի<sup>\*2)</sup>։

Հարկային ծառայողի գործողությունները կարող են բողոքարկել հարկային մարմին կամ դատարան։ Հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների գործողությունները կարող են բողոքարկել հարկային մարմին կամ դատարան։

#### **Գլուխ VI. Եզրափակիչ դրույթներ**

#### **Հոդված 45. Անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2003թ. հունվարի 1-ից։

2. Վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների և հարկային տեսչությունների գործառույթների հաստատվելուց հետո հարկային մարմնի համակարգի համապատասխան պաշտոնները զբաղեցնող աշխատողները համարվում են հարկային ծառայողներ: <sup>(2)</sup>

3. Սույն օրենքով նախատեսված հարկային ծառայողի առաջին ատեստավորումն անցկացվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց 90 օր հետո:

4. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո հարկային ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում դա համարվում է սույն օրենքով սահմանված կարգով:

5. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը շնորհված հարկային ծառայության հատուկ և դասային կոչումները պահպանվում են:

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 1998 թվականի հոկտեմբերի 6-ի «Երևային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության աշխատողների դասային և հատուկ կոչումներ սահմանելու մասին» Երևային Ղարաբաղի Հանրապետության օրենքը:

7. Երևային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հրամանագրով, Երևային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշմամբ հանրապետական գործադիր կամ այլ պետական մարմնների կամ հիմնարկների վերակազմավորման, կառուցվածքային փոփոխությունների արդյունքում հարկային մարմնին փոխանցվող գործառույթների հետևանքով հարկային մարմին փոխադրվող աշխատողների վրա չեն տարածվում սույն օրենքով սահմանված մրցույթի և 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված դրույթները: Այդ աշխատողների հարկային ծառայության պաշտոնի նշանակումը իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի հրամանով՝ փորձաշրջանով: <sup>(3)</sup>

## ԵՌՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ԴՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

14 հոկտեմբերի 2002թ.  
ք. Ստեփանակերտ  
ՀՕ-5

## ԵՌՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ<sup>(1)</sup>

### «Հարկային ծառայության մասին» Երևային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

(Քաղվածք. սույն օրենքի 3-րդ հոդվածը, որը վերաբերվում է 1998 թվականի սեպտեմբերի 19-ի «Երևային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության աշխատակիցներին դասային և հատուկ կոչումներ շնորհելու և դրանց համապատասխան դրամական հավելավճարներ տալու մասին» կանոնադրության մասին» Երևային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի թ. Ն. 0339-1 որոշումն ուժը կորցրած ճանաչելուն հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առաջին)

#### Հոդված 3.....

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել՝ 1998 թվականի սեպտեմբերի 19-ի «Երևային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության աշխատակիցներին դասային և հատուկ կոչումներ շնորհելու և դրանց համապատասխան դրամական հավելավճարներ տալու մասին» կանոնադրության մասին» Երևային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի թ. Ն. 0339-1 որոշումը:

## ԵՌՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ<sup>(2)</sup>

### «Հարկային ծառայության մասին» Երևային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

(Քաղվածք. սույն օրենքի 32-րդ հոդվածը, որը վերաբերվում է 1998 թվականի հոկտեմբերի 6-ի «Երևային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության խրախուսման և սոցիալական զարգացման ֆոնդի մասին» Երևային Ղարաբաղի Հանրապետության օրենքը ուժը կորցրած ճանաչելուն, ինչպես նաև հարկային ծառայության մասին Երևային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ

հոդվածի ուժի մեջ նտնելուն՝ հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով  
ներկայացվում է առաջին)

### Հոդված 32. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ձանաչել՝ 1998 թվականի հոկտեմբերի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության խրախուսման և սոցիալական զարգացման ֆոնդի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը:

2. Սույն օրենքի 20-րդ հոդվածն ուժի մեջ է նտնում 2005 թվականի հունվարի 1-ից:

### ԼԵՇՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

#### ՕՐԵՆՔԸ<sup>4)</sup>

##### «Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

(Քաղվածք. սույն օրենքի 18-րդ հոդվածը, որը վերաբերվում է պետական հավատարմագրում ստացած բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտելու պահանջին հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առաջին)

### Հոդված 18. ...

Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հարկային մարմնի համակարգում աշխատող հարկային ծառայողների վրա սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված՝ պետական հավատարմագրում ստացած մասնագիտությունների գծով պետական հավատարմագրում ստացած բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտելու պահանջը տարածվում է 2010 թվականի հունվարի 1-ից:

\*1) «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի 30.12.03թ. ՀՕ-37 խմբագրությամբ

\*2) «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններն լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի 15.07.04թ. ՀՕ-121 խմբագրությամբ

\*3) «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի 30.12.04թ. ՀՕ-158 խմբագրությամբ

\*4) «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի 17.03.06թ. ՀՕ-260 խմբագրությամբ

\*5) «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի 30.12.07թ. ՀՕ-104 խմբագրությամբ

\*6) «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի 18.06.09թ. ՀՕ-104 խմբագրությամբ

\*7) «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի 27.11.13թ. ՀՕ-58-Ն խմբագրությամբ

\*8) «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի 18.12.13թ. ՀՕ-68-Ն խմբագրությամբ

\*9) «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի 26.12.13թ. ՀՕ-93-Ն խմբագրությամբ

\*10) «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի 26.12.13թ. ՀՕ-99-Ն խմբագրությամբ